ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2914/2 «05» 03 2020թ.

ԵՎՐԻՄԱԺԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 158-ՐԴ ՆԻՍՏԻՆ ԵՎՐԻՄԱԺՈՒՄ ՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ 2020 թ. մարտի 16-20-ը Խորվաթիայի Զագրեբ քաղաքում Եվրիմաժի կառավարման խորհրդի 158-րդ նիստին Եվրիմաժում ՀՀ ներկայացուցիչներ Ս. Հարությունյանի և Մ. Կարապետյանի մասնակցությունն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Եվրիմաժի կառավարման խորհրդի 158-րդ նիստին Եվրիմաժում ՀՀ ներկայացուցիչներ Ս. Հարությունյանի և Մ. Կարապետյանի մասնակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից (տող՝ «Միջազգային մշակութային համագործակցության իրականացում, սփյուռքի հետ համագործակցություն,

հայ մշակույթի պահպանում») հատկացնել 1645.4 (մեկ միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր) հազար դրամ՝ Խորվաթիայի Զագրեբ քաղաքում Եվրիմաժի կառավարման խորհրդի 158-րդ նիստին Եվրիմաժում ՀՀ ներկայացուցիչներ Ս. Հարությունյանի և Մ. Կարապետյանի մասնակցության ծախսերը ապահովելու համար:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին՝ սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար, հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում հաստատել ծախսերի նախահաշիվը և կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

4. Նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետին՝

1) հսկողություն իրականացնել պայմանագրի, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվության ներկայացման ժամկետի կատարման նկատմամբ.

2) պայմանագրով նախատեսված բովանդակային հաշվետվությունն ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, դրա վերաբերյալ եզրակացությունը տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը.

3) մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության նախագիծը և բովանդակային հաշվետվությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.03.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020 թ. Դեկտեմբերի 5-ի N 2914-Ա/Հ հրամանի

ԾՐԱԳԻՐ

Եվրիմաժի կառավարման խորհրդի 158-րդ նիստին Եվրիմաժում ՀՀ ներկայացուցիչներ Ս. Հարությունյանի և Մ. Կարապետյանի մասնակցության

1. Կազմակերպության անվանումը

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ

2. Կազմակերպության գտնվելու վայրը

ք. Երևան, Տերյան 3ա

3. Ծրագիր

Եվրիմաժի կառավարման խորհրդի 158-րդ նիստին Հայաստանի ներկայացուցիչներ՝ Մ. Կարապետյանի և Ս. Հարությունյանի մասնակցության

3.1 Բովանդակությունը

Հայաստանը 2016 թ. սկսած անդամակցում է «Ֆիլմարտադրության ոլորտում աջակցության եվրոպական հիմնադրամ–Eurimages»-ին, որը հանդիսանում է ֆիլմարտարդրության ոլորտում խոշորագույն հիմնադրամներից մեկը: Եվրիմաժի տարեկան բյուջեն կազմվում է անդամ պետությունների տարեկան ֆինանսական ներդրումներից և տրամադրված վարկերի վերադարձից:

Եվրիմաժի Հայաստանյան ներկայացուցիչները Եվրիմաժի կառավարման խորհրդի կանոնադրության համաձայն պետք է մասնակցի տարվա 4 անգամ անցկացվող նիստերի աշխատանքներին: Եվրիմաժի աջակցությունը ստանալու համար տարին չորս անգամ Եվրիմաժի քարտուղարություն են ներկայացվում լիամետրաժ խաղարկային, անիմացիոն և վավերագրական ֆիլմերի համատեղ արտադրության նախագծեր: Եվրիմաժի կառավարման խորհուրդը նիստերի աշխատանքների ընթացքում գնահատում է քարտուղարության հավանությանն արժանացած նախագծերը, որի արդյունքում ընտրվում են աջակցություն ստացող նախագծերը:

3.2 Նպատակը

Խթանել համատեղ ֆիլմարտադրությունը, աջակցել եվրոպական շուկայում կինոնկարների վարձույթի և ցուցադրության գործընթացին, աջակցել Եվրոպական տարբեր երկրների կինոգործիչների համագործակցությանը և ոչ կոմերցիոն կինոարտադրության զարգացմանը:

3.3 Անցկացման վայրը

Զագրեբ, Խորվաթիա

3.4 Անցկացման ժամկետները

2020 թ. մարտի 16-20-ը

3.5 Ակնկալվող արդյունքներ

Համատեղ ֆիլմարտադրության զարգացում;

Եվրոպական շուկայում կինոնկարների վարձույթի և ցուցադրության գործընթացի խթանում;

Եվրոպական տարբեր երկրների կինոգործիչների համագործակցության և ոչ կոմերցիոն կինոարտադրության զարգացման խթանում: